



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, (0222) 69080, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 11

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջների՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 4 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝
 - 1) Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 11-ի N 8-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
 - 2) Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 10-ի N 37-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
 - 3) Պտղնի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:
 - 4) Պտղնի համայնքում հանրային բաց խումբների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին:
 - 5) Պտղնի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին:
 - 6) Համայնքային սեփականություն համարվող հողատեսքն աճուրդ վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
 - 7) Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 12-ի N 14 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
 - 8) Պտղնի համայնքի ղեկավարի 2016 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին հաղորդում:
 - 9) Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 10-ի N 35 և N 36 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐԹԱՆ ՎԱԶԳԵՆ

2. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ

3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐԶԱՆԻԿ

4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՄԻԱՄՆԻԿ

5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՊԻՆ

6. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, (0222) 69080, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 12-Ն

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 8-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջների՝ *ավագանին որոշում է*.

1. Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 11-ի «Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին» N 8-Ն որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ

2. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ

3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐԶԱՆԻԿ

4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՄԻԱՄՆԻԿ

5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՊԻՆ

6. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար

Ա. Վիրաբյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2013 թվականի
փետրվարի 11-ի թիվ 8-Ն որոշմամբ
Փոփոխությունը համայնքի ավագանու 2016 թվականի
ապրիլի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ

ՊՏՂՆԻ 2013 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը


1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները
6. Եզրափակում

ԻՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ



Պտղնի համայնքը գտնվում է Կոտայքի մարզում, Հրազդան գետի ձախ ափին: Սահմանակից է՝ Վերին Պտղնի, Գետամեջ, Բալախովիտ, Երևան և Աբովյան համայնքների վարչական տարածքներին: Մարզկենտրոնից գտնվում է 35 կմ հեռավորության վրա, Աբովյան համայնքից՝ 10 կմ:

Համայնքը վերաբնակեցվել է 1828թ.: Այն ավելի հին է, քան ենթադրվում է, որի վկայությունն է համայնքի կենտրոնում գտնվող 6-7-րդ դարերին կառուցված Պտղավանք եկեղեցին, որը ավերվել է Շահ Աբասի ասպատակություններից: Համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1325մ բարձրության վրա: Աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ ծնոանը ցրտաշունչ է, ամռանը շոգ: Հաճախակի են չորային, երաշտի տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությունը: Տարվա եղանակներից համեմատաբար լավ է զարուներ, ամառը տևական է: Տարեկան տեղումների քանակը կազմում է 250-ից 350 մմ, վերջին տարիներին նկատվում է տևական ձնածածկույթի սակավություն: Համայնքի արևելյան մասում գտնվում են մեծ և փոքր սարերը, որը նմանվում է Մասիս և Սիս սարերին: Համայնքում կա ընդերքից դուրս եկող աղբյուր, որը օգտագործվում է խմելու նպատակով, սակայն համայնքը օգտվում է Արզական-Երևան ջրատարից:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ապրում են հիմնականում բնիկները, համայնքում կան նաև այլ բնակավայրերից վերաբնակիչներ:

Համայնքի առկա բնակչությունը 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ 1767 մարդ է (570 տնտեսություն), որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 47%-ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

Երեխաներ/0-5/	103
Դպրոցականներ /6-17/	223
18-65 տարեկան և բարձր	1441
Թոշակառուներ	174
Հաշմանդամներ	53
Աշխատունակներ	1214
Փախստականներ	9
Գործազուրկներ	670
Ընտանիքների թիվ	570
Գրանցված «Փարոս»	16

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանություն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի, չորս տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարը (համայնքապետը) պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմը բերված է սխեմայում:

Համայնքի ավագանին կազմված է 7 անդամից:

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և գույքային այլ իրավունքներ:

Համայնքապետարանը գտնվում է համայնքի սկզբնամասում, շենքային պայմանները բավարար են, համալրված է համակարգչային տեխնիկայով:


Համայնքում առկա է համախմբվածություն, որը սակայն չի հանգեցրել սոցիալական ինստիտուտների ձևավորման: Համայնքում չկան ֆորմալ միավորումներ:

Համայնքապետարանի աշխատակազմը հետևյալն է՝

Քաղաքական պաշտոն	
համայնքի ղեկավար	1 դրույք
Հայեցողական պաշտոն	
համայնքի ղեկավարի տեղակալ	1 դրույք
Համայնքային ծառայողներ	
աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1)	1 դրույք
կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1)	1 դրույք
կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2)	1 դրույք
կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-3)	1 դրույք

կրտսեր պաշտոնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1) 1 դրույք
 կրտսեր պաշտոնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-2) 1 դրույք
 կրտսեր պաշտոնի երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1) 1 դրույք
Տեխնիկական սպասարկման անձնակազմ
 վարորդ 1 դրույք
 հավաքարար 1 դրույք
 կոմունալ սպասարկման բանվոր 1 դրույք

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է 12 ՀՈԳՈՒՑ



1.4. ԶԲԱՂԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական տարածքին հարող Երևան և Արմավյան համայնքների խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ավելի քան 500 նախկին աշխատակիցներից միայն 50 մարդ է աշխատում համայնքի տարածքում գտնվող փոքր և միջին մասնավոր ձեռնարկություններում, աշխատունակ բնակչության մնացած մասը ձգտում է արտագնա աշխատանքի:

Աշխատատեղերի պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Համայնքի տարածքում գործում են 2 խանութներ, հանրային սննդի 2 օբյեկտ, գրանցված են արտադրական և ոչ արտադրական մասնավոր ձեռնարկություններ, անհատ ձեռներեցներ:

Բնակիչների եկամուտների հիմնական աղբյուրը թոշակներն ու նպաստներն են, որի համակարգից շատ ընտանիքներ դուրս են մնացել: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը աշխատատեղերի ստեղծումն է, քանզի համայնքն ունի մեծ աշխատուժ, մտավոր և ֆիզիկական

զգալի պոտենցիալ, որն էլ հույս է ներշնչում լավատեսորեն նայելու վաղվա օրվան:

1.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկն է՝
Համայնքի վարչական շենք
Պոլիկլինիկայի շենք
Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
Հուշարձան

Համայնքապետարանի վարչական շենքն ունի մասնակի վերանորոգման կարիք:
Ներհամայնքային ոռոգման համակարգը կառուցվել է 1976թվականին, մաշվածությունը շատ մեծ է, որը չի ապահովում պոմպերի աշխատանքը ամբողջ հզորությամբ:
Ճանապարհների մի մասը վերանորոգման կարիք ունի: Անհրաժեշտ է վերանորոգել 5000 մետր:
Հուշարձանը գտնվում է շատ անմխիթար վիճակում, որը կառուցվել է 1979 թվականին:
Գերեզմանատունը կարիք ունի ցանկապատման, որպեսզի սահմանազատվի բնակավայրից:

1.6 ԲՆՈՒԹՅԱՆ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է: Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպումը այսօր բավարար հիմքերի վրա է: Աշխատանքներ են ծավալվում նաև Պտղնիի այգեգործական զանգվածում աղբահանության կազմակերպման ուղղությամբ: Այդ հատվածի բնակիչները, ինչպես նաև համայնքի բնակիչներից շատերը դեռևս տնտեսական, հաճախ նաև շինարարական աղբը թափում են աղբի համար անթույլատրելի տարածքներում: Սանիտարական մաքրման և աղբահանության ասպարեզում անելիքներ դեռևս կան:
Կենցաղային աղբի կուտակման համար 2012 թվականին համայնքի հողերի գոտիավորման օգտագործման սխեմայով համայնքում առանձնացվել է 1.42 հա տարածք (աղբավայր):
Համայնքում գործում աղբահանության կենտրոնացված համակարգ:

1.7 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում է 860 առանձնատուն 93800 քմ մակերեսով, որոնք սեփական միջոցներով կառուցված բնակելի տներ և այգետնակներ են: Այգեգործական թաղամասում ավելի քան 200 այգետնակների շինարարություն գտնվում է տարբեր աստիճանի անավարտ վիճակում:
Համայնքը շուրջ 80% գազաֆիկացված է: Նոր թաղամասը գազաֆիկացման կարիք ունի, որոշ հատվածներ դեռևս զրկված են խմելու ջրից, ինչպես նաև թաղամասի ճանապարհները ասֆալտապատված չեն:
Համայնքը ունի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա:
Համայնքում լուծված է փողոցային լուսավորության հարցը:
Նոր թաղամասում ջրամատակարարման հարցը լուծված է մասամբ՝ հիմնականում բնակչության միջոցներով: Այդ թաղամասում դեռ կա խմելու ջրի խնդիր:
Համայնքում կան բնակարանի կարիք ունեցող շուրջ 87 ընտանիքներ:

1.8 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքը չի դասվում գյուղատնտեսական մթերքներ արտադրող գյուղերի շարքին: Այգիները հիմնականում հիմնվել են ավելի քան 40 տարի առաջ և ներկայումս չեն ծառայում իրենց նպատակին, իսկ վարելահողերի մեծ մասը ոռոգման ջրի սղության, հողի ոչ բերրի լինելու

հետևանքով դարձել են արոտներ, քանի որ որպես անջրդի վարելահող օգտագործելը եկամտաբեր չէ և արդյունքում համայնքի գյուղացիական տնտեսություններից տարիների ընթացքում հող մշակողների թիվը կրճատվել է: Համայնքի գյուղացիական տնտեսությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու և բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Անձրևային տարիներին որոշ չափով բերք հավաքվում է, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 80 % -ը: Համայնքի բնակիչներից միայն 110 ընտանիք է զբաղվում անասնապահությամբ, ստացված կաթնամթերքը նրանք օգտագործում են միայն իրենց ընտանիքների կարիքների համար:

Ստորև բերված է Պտղնի համայնքի հողային ֆոնդի բաշխումը:

Համայնքի վարչական տարածք	790.91 հա
Սեփականաշնորհված վարելահողեր	65.9 հա
Արոտավայրեր	91.43 հա
Անօգտագործելի հողեր	195.35 հա
Չորեր	20 հա
Դաշտային ճանապարհներ	22 հա
Գերեզմանատուն	7.93 հա
Տնամերձ հողեր	77.22 հա
Դպրոց	0.33 հա
Տրանսպորտ	25 հա
Արդյունաբերություն	17 հա
Հուշարձան	0.045 հա
Գյուղամիջյան փողոցներ	22.7 հա
Մեկ հողաբաժնի չափը	0.15 հա

1.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարածքում գործում է մեկ միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 210 աշակերտ և աշխատում են 23 ուսուցիչներ: Համայնքում գործող կրթական հաստատությունները մշտապես գտնվում են համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Համայնքապետարանի կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր, խթանելու կրթության մակարդակի բարելավմանը, օժանդակելու կրթօջախների առջև ծառացած խնդիրների լուծմանը: 2010 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին հանրակրթական դպրոցում իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ: Հին պատուհանները փոխարինվել են մետաղապլաստե պատուհաններով, ջրամատակարարման, ջրահեռացման ներքին ցանցը, սանիտարական հանգույցները (զուգարանները) ենթարկվել են կապիտալ վերանորոգման: Հանրակրթական դպրոցի տարածքը գտնվում է բարեկարգ վիճակում: Դպրոցի տարածքը ցանկապատված է:

1.10 ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԿՐՈՆ, ՄՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքը չունի մշակույթի տուն, մարզահրապարակներ, մանկապարտեզ որի հետևանքով երիտասարդությունը զրկվում է իր ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորությունից: Սակայն համայնքում կազմակերպվում են մշակութային, սպորտային, երիտասարդական միջոցառումներ: Նախատեսվում է առաջիկայում նույնպես շարունակել այս աշխատանքները հնարավորինս շատ մասնակիցներ ընդգրկելով իրականացվող ծրագրերում:

Շենքային պայմաններ չունի նաև գրադարանը, որը գործում է համայնքապետարանի շենքում: Գրադարանն ունի ավելի քան 4036 կտոր գրականություն:

Հանգստի գոտիների, մշակութային հիմնարկների առկայությունը խթան կհանդիսանար համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, կրթական, ֆիզիկական դաստիարակության զարգացման գործում, սակայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին այս ծրագրերի իրագործումը զրեթե անհնար է:

1.11 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է մեկ բուժկետ, գտնվում է բարվոք վիճակում, որը վերանորոգվել է 2005 սոց հիմնադրամի և համայնքի ներդրումների միջոցներով, ունի համապատասխան գույք և սարքավորում: Բուժկետն ունի 3 աշխատող:

1.12 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքը շատ մոտ է մայրաքաղաքին, որը հնարավորություն է տալիս բնակչությանը իրենց առօրյա հոգսերով զբաղվելու:

Համայնքի բնակչությունը ապահովված է հեռախոսակապով:

Համայնքը ամբողջովին գազաֆիկացված է:

Համայնքը Արմավյան համայնքի հետ կապում է Պտղմի - Արմավյան N 53 երթուղին, որն աշխատում է ժամանակացույցով:

Համայնքում կա 2 պարենային խանութներ, երկու հասարակական սննդի օբյեկտ, երկու օդու արտադրամաս, չորս ջերմային տնտեսություն և հացաթխման արտադրամաս, որոնք հնարավորություն են ստեղծում բնակչությանը ապահովելու իրենց առաջին անհրաժեշտությա ապրանքներով: 2012 թվականից ՀՀ Կառավարության օժանդակությամբ դպրոցի շենքում գործում է նախակրթարան:

1.13 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

բնակավայրի տարածքում կոյուղու համակարգի բացակայություն.

մոր թաղամասում ճանապարհների անբարեկարգ վիճակ.

գործազրկության առկայություն.

ազգաբնակչության անվճարունակություն, սոցիալ-տնտեսական պայմանների ոչ բարձր մակարդակ.

մանկապարտեզի բացակայություն.

մարզկենտրոնից հեռու գտնվելը.

ոռոգման ջրի սղությունը և ցանցերի անմխիթար վիճակը.

համայնքի ճանապարհի, խմելու ջրի և ոռոգման ջրի ներհամայնքային համակարգերի անմխիթար վիճակ.

1.14 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծ աշխատուժի առկայություն:

Ռոռոգման ջրի առկայության դեպքում գյուղ մթերքների արտադրություն:

Անասնապահության զարգացում:

1.15 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

բնական աղետներ (երկրաշարժ, սողանք, կարկուտ և այլն).

համայնքի ոռոգման ցանցերի վերանորոգման անհրաժեշտություն.

հարկերի և վճարումների գանձման դժվարությունը վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:

ոռոգման ինքնահոս ջրագծի անհրաժեշտությունը, առանց որի անհնար կլինի համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, մշակութային պայմանները: Համայնքը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝ զարգացնել գյուղատնտեսությունը և անասնապահությունը համայնքում:

Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին, ապահովել տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:

2.2 ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

պաշտպանել համայնքի բնակչության իրավունքները և օրինական շահերը.

բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.

ապահովել համայնքային շինությունների պահպանումը և շահագործումը.

համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր՝ զարգացնելով փոքր և միջին բիզնեսը, գյուղատնտեսությունը.

հատուկ ուշադրություն դարձնել կրթության օջախների նորմալ գործունեությանը.

միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.

բարձրացնել համայնքապետարանի աշխատակազմի կառավարման արդյունավետությունը:

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԱՎԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1-2

ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
ԻՆՔՆԱՅՈՍ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նպատակը

Եկեղեցու վերակառուցման աշխատանքների համար
Առանց պոնպակայանների համայնքին ոռոգման ջրով ապահովելը

ԾՐԱԳԻՐ 3-4

ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ
ՆԵՐՉԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՅՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Նպատակը

Ապահովել տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկություն:

ԾՐԱԳԻՐ 5-6

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Նպատակը

Աշխատակազմի աշխատանքային պայմանների բարելավում

ԾՐԱԳԻՐ 7-8

ՆԵՐՉԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ
ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐԻ ՊԱՐՄՊԱՊԱՏՈՒՄ

Նպատակը

Գյուղատնտեսության զարգացում
Գերեզմանատների սահմանազատումը բնակավայրից

Համայնքի ղեկավար /



/ Ա. Վիրաբյան

**4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

		/հազ. դրամ/			
ՀՀ	Եկամուտներ	2013թ. փաստ.	2014թ. կանխա- տեսում	2015թ. կանխա- տեսում	2016թ. կանխա- տեսում
1.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐԵՏՆԵՐ	12540.0	12540.0	12540.0	12540.0
Ա	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	12540.0	12540.0	12540.0	12540.0
Ա.1	ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	12540.0	12540.0	12540.0	12540.0
1.	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	11450.0	11450.0	11450.0	11450.0
1.1	Հողի հարկ	950.0	950.0	950.0	950.0
1.2	Գույքահարկ	10500.0	10500.0	10500.0	10500.0
1.3	Եկամտահարկ	---	---	---	---
1.4	Այլ հարկ եկամուտներ	---	---	---	---
2	ՏՈՒՐՔԵՐ	430.0	430.0	430.0	430.0
2.1	Պետական տուրքեր				
2.2	Տեղական տուրքեր	430.0	430.0	430.0	430.0
3	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	660.0	660.0	660.0	660.0
3.1	Համայնքի վարչ. տար-ում գտնվող հողերի վարձակալ. և օգտագործ. դիմաց գանձվող վճարներ	200.0	200.0	200.0	200.0
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ	---	---	---	---
3.3	Վարչ. իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչ. պատասխ. միջոցների կիրառումից եկամուտներ	60.0	60.0	60.0	60.0
3.4	Տեղական վճարներ	400.0	400.0	400.0	400.0
3.5	Այլ ոչ հարկ. եկամուտներ	---	---	---	---
Ա.2	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ	---	---	---	---
Բ	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐԵՏՆԵՐ	---	---	---	---
Բ.1	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐԵՏՆԵՐ	---	---	---	---
Բ.2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՏՐԱՆՍՖԵՐԵՏՆԵՐ	---	---	---	---

Համայնքի ղեկավար՝



Ա. Վիրաբյան

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՍՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2013թ. փաստ.	2014թ. փաստ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.
	1	2	3	4	5	6
1	Համայնքի տարածքը	հա	790.91	790.91	790.91	790.91
2	Բնակչության թիվը	մարդ	1767	1787	1805	1827
3	Ծնունդը	մարդ	12	14	17	21
4	Մահացությունը	մարդ	2	---	---	---
5	Աշխ. ռեսուրսները այդ թվում՝	մարդ	730	755	796	848
	ա/զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի	մարդ	680	705	733	786
6	Գործազրկության մակարդակը	%	80	80	75	70
7	Առևտրի և սպասարկումների օբյեկտների թիվը	հատ	3	4	5	5
8	Պահուստային հողեր	հա	---	---	---	---
9	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	---	---	---	---
10	Խմելու ջրի ներհամայնքային համակարգի երկարությունը	կմ	5.0	5.0	1.5	1.0
11	Ներհամայնքային ոռոգման համակարգի երկարությունը	կմ	3.0	3.0	1.0	1.0
12	Ոռոգման համակարգի տակ գտնվող հողերը	հա	10	10	11	12
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	3.0	3.0	1.0	1.0
14	Զբոսեկարգված փողոցների և ճանապարհների երկարությ.	կմ	6.0	6.0	5.0	4.0
15	Բնակ. ֆոնդ, այդ թվում	չենք հազ.քմ	93.8	94.1	94.5	94.8
	□ համայնքային		0.8	0.8	---	---
	□ մասնավոր		93.0	93.3	93.6	94.0
16	Բնակարիքավոր ընտանիքների թիվը	ընտ.	125	125	115	110
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	50	50	50	50
18	Ջրի կորուստները ներհամայնքային համակարգում	%	50	45	40	35
19	Սովորողների թիվը	մարդ	223	238	250	265

	հանրակրթ. դպրոցում					
20	Երեխաների թիվը մանկ- ուն	մարդ	---	---	---	---
21	Համայնքապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	12	12	12	12

Համայնքի ղեկավար /



/ Ա. Վիրաբյան

2013-2016 թթ. ՊՏՈՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ՃՐԱԳԻՐ

ՀՀ	Ծրագրի միջոց. աշխտ. անվանումը	Չափ միավոր	Ծավալ	Ֆինանս. միջոցն. ամփոփման քանակը /հազ. դրամ/	Ֆինանսավորման աղբյուրներ				Կատարման ժամկետները					Պատասխանատու
					համայնք. բյուջե	դրուր կազմ.	այլ պետ. բյուջե և այլն	2013թ. Ծավալ ֆին.միջ	2014թ. Ծավալ ֆին.միջ	2015թ. Ծավալ ֆին.միջ	2016թ. Ծավալ ֆին.միջ			
1	Եկեղեցու վերակառ. նախագծ. աշխատանք.			7000.0	7000.0					7000.0			Համ. ղեկ.	
2	Ինքնահ. ոռոգ. ջրագծի կառ.	կմ	10	300000.0			300000.0						Համ. ղեկ.	
3	Նոր թաղամասի ասֆալտ.	մ ²	3000	21000.0	21000.0							21000.0	Համ. ղեկ.	
4	Ներհամայնք. ճան. ասֆալ.	մ ²	700	5000.0	5000.0			5000.0					Համ. ղեկ.	
5	Համայն. շենքի մաս. վերա.			5000.0	5000.0							5000.0	Համ. ղեկ.	
6	Փողոցների լուսա. անցկա.			3000.0	3000.0			3000.0					Համ. ղեկ.	
7	Ներհամ. ոռոգ. ջրագծի կառ.	կմ	3	12000.0	12000.0				4000.0	4000.0		4000.0	Համ. ղեկ.	
8	Գերեզմանների պարսպա.			10000.0	2000.0	8000.0				10000.0			Համ. ղեկ.	

Համայնքի ղեկավար՝



Ա. Վիրաբյան

6. ԵԶՐԱՓՈԿՈՒՄ

Այսպիսով, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը հիմք կհանդիսանա համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման աշխատանքները կազմակերպելիս: Անցյալ չորս տարիների փորձը ցույց տվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ աշխատանքը մեծապես կախված է բյուջետավարման գործընթացի ճիշտ կազմակերպումից:

Շատ կարևոր է եկամուտների աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

Ելնելով համայնքի զարգացման քառամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, համայնքապետարանի աշխատակազմը մշակում է կոնկրետ ծրագրեր, որոնցով կարելի է հարց ներկայացնել հանրապետական բյուջեից ներդրումներ ստանալու համար, փնտրել ինվենստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել բնակիչների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների միջոցները:

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումների համաձայն, օգտագործելով «Տեղական ինքնակառավարման մարմինների ուսուցման մեթոդական ձեռնարկի» նյութերը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, (0222) 69080, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 13-Ն

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջների՝ ավագանին որոշում է.

1. Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 10-ի «Պտղնի համայնքի ավագանու կանոնակարգի ընդունման մասին» N 37-Ն որոշման հավելվածում «գյուղապետարան» բառը փոխարինել «համայնքապետարան» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ

2. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ

3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐԶԱՆԻԿ

4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ

5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՊԻՆ

6. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, (0222) 69080, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 14-Ն

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 10.2-րդ կետի, 33.1-րդ հոդվածի, 54.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջների՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Պտղնի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՍՏՐԾԱՆ ՎԱՋԳԵՆ

2. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ

3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՄԻԱՄՆԻԿ

5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՊԻՆ

6. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ



ԿԱՐԳ

ՊՏԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Պտղնի համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների (այսուհետ՝ ԽՄ-ների) ձևավորման, դրանց գործունեության և այդ մարմիններին անդամակցելու հետ կապված հարաբերությունները և հիմնական պահանջները:
2. Սույն կարգի նպատակն է՝ ձևավորել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության հատակ, արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով փոխադարձ կապն ու համագործակցությունը, մի կողմից, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և, մյուս կողմից, համայնքում քաղաքականություն մշակող և որոշում ընդունող տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԽՄ-երի) միջև:
3. Սույն կարգի խնդիրներն են.
 - 1) հստակեցնել ԽՄ-ների գործունեության նպատակները, խնդիրները և գործառույթները.
 - 2) սահմանել ԽՄ-ների քանակն ու անվանումները.
 - 3) սահմանել ԽՄ-ների ձևավորման, անդամների ընտրության մոտեցումները և գործունեության կարգը.
 - 4) հստակեցնել ԽՄ-ների գործունեությանն առնչվող կողմերի դերերը և գործառույթները.
 - 5) սահմանել այլ մարմինների հետ ԽՄ-ների հարաբերությունները.
 - 6) սահմանել ԽՄ-ների գործունեության դադարեցման, սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման մոտեցումները:

II. ԽՄ-ՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. ԽՄ-ները Պտղնի համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմիններ են, որոնց միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը: ԽՄ-ները, որպես համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միավորված խումբ, կարող են խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի

ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

5. ԽՄ-ների նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ ապահովելով համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

6. ԽՄ-ների խնդիրներն են.

- 1) խորհրդատվություն տրամադրել համայնքի ղեկավարին համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ.
- 2) ապահովել տեղական ինքնակառավարմանը Պտղնի համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունն ու նրանց ձայնի հասանելիությունը ՏԻՄ-երին.
- 3) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ:

7. ԽՄ-ների գործառույթներն են.

- 1) ապահովել համայնքի բնակիչների իրազեկությունը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ.
- 2) աջակցել և մասնակցել համայնքի զարգացման քառամյա ծրագրի, բյուջեի և այլ ծրագրային փաստաթղթերի մշակման, քննարկման, իրականացման և վերահսկման, մոնիթորինգի, աուդիտի և գնահատման աշխատանքներին.
- 3) եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին համայնքին առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի վերաբերյալ.
- 4) վերհանել տվյալ ոլորտում հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող խնդիրները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
- 5) ուսումնասիրել և քննարկել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերը և դրանց վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
- 6) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ.
- 7) ապահովել հարթակ, մի կողմից, համայնքի ղեկավարի, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների համար և, մյուս կողմից, համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միջև կապի և երկխոսության համար.
- 8) աջակցել համայնքում կոնֆլիկտների կանխարգելմանը, ծագած կոնֆլիկտների լուծմանը, նպաստել համայնքում առկա հակամարտությունների մեղմմանը.
- 9) հետևել ԽՄ-ների կողմից ընդունված որոշումների հետագա կատարման ընթացքին.
- 10) համագործակցել համայնքային աշխատանքային խմբերի և այլ մարմինների հետ.

11) առաջադրել «Համայնքի ակտիվ բնակիչ» խրախուսական մրցանակի թեկնածու:

III. ԽՄ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

8. Պտղնի համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում են թվով երեք ԽՄ-ներ: Դրանք են.

- 1) համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ.
- 2) քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի ԽՄ.
- 3) կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի ԽՄ:

IV. ԽՄ-ՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

9. ԽՄ-ների ձևավորումը իրականացվում է հետևյալ կարգով.

- 1) ԽՄ-ները կարող են ունենալ մինչև 25 անդամ.
 - 2) ԽՄ-ները ձևավորված են համարվում, եթե տվյալ ԽՄ-ի կազմում ընդգրկված է առնվազն հինգ անդամ.
 - 3) ԽՄ-ներն ունեն նախագահ և քարտուղար: Նախագահը և քարտուղարը ԽՄ-ների անդամ չեն:
10. ԽՄ-ների կազմում, իրենց համաձայնությամբ, կարող են ներգրավվել.
- 1) համայնքի ավագանու մեկից երեք անդամ.
 - 2) համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետներ.
 - 3) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
 - 4) մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
 - 5) պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչներ.
 - 6) համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների (համատիրությունների, հավատարմագրային կամ լիազորագրային կառավարման մարմինների, կոոպերատիվների և այլնի) և (կամ) համայնքի թաղամասերի և բնակավայրերի ներկայացուցիչներ.
 - 7) փորձագետներ.
 - 8) համայնքի ակտիվ բնակիչներ.
 - 9) այլ շահագրգիռ անձիք:
11. Յուրաքանչյուր կազմակերպությունից կամ խմբերից կարող է ներգրավվել մեկ անդամ:

12. ԽՄ-ները ձևավորվում են սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում:

13. ԽՄ-ները գործում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

14. Նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո երկու ամսվա ընթացքում ձևավորվում են նոր կազմով ԽՄ-ներ:

15. ԽՄ-ների անդամ չեն կարող լինել.

- 1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.
- 2) հանցագործության համար դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում.
- 3) զինված ուժերի ժամկետային զինծառայողները:

16. ԽՄ-ների անդամների թեկնածուների ներկայացումը և հաստատումը կատարվում է հետևյալ կարգով.

- 1) ԽՄ-ների անդամների թեկնածուներին, համայնքի ղեկավարի համապատասխան առաջարկության ներկայացմամբ, հաստատում է համայնքի ավագանին՝ համապատասխան որոշմամբ.
- 2) ԽՄ-ների անդամները տվյալ ԽՄ-ի կազմում ընդգրկվում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը.
- 3) համայնքի նորընտիր ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո նոր կազմով ԽՄ-ներ ձևավորելիս՝ ԽՄ-ների նախկին անդամներն իրենց համաձայնությամբ կարող են նորից ներկայացվել և ընդգրկվել ԽՄ-ների կազմում:

17. ԽՄ-ների անդամների թեկնածուների առաջադրումը կատարվում է հետևյալ կարգով.

- 1) համայնքի ավագանու անդամի թեկնածուին առաջադրում է համայնքի ավագանին՝ իր որոշմամբ (թեկնածուի համաձայնությամբ).
- 2) համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի թեկնածուին առաջադրում է համայնքի ղեկավարը (թեկնածուի համաձայնությամբ).
- 3) ԽՄ-ների մյուս անդամների թեկնածուներին առաջադրում է ԽՄ-ների անդամների ընտրության նպատակով համայնքի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովը՝ դիմում ներկայացրած անձանց կազմից:

18. ԽՄ-ների անդամների (քացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրությունը կատարվում է հրապարակային հայտարարության հիման վրա դիմումներ ներկայացրած անձանց կազմից: Հայտարարությունը տրվում է սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում: Հայտարարությունը փակցվում է ՏԻՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար: Համայնքի պաշտոնական ինտերնետային (համացանցային) կայքի առկայության դեպքում հայտարարությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական գանգվածային լրատվության միջոցներով, տեղական

հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսագանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն): Հայտարարության մեջ նշվում է, թե որ ԽՄ-ներին անդամակցելու համար է կատարվում հրավերը, ովքեր, ինչպես և ինչ ժամկետներում կարող են դիմել: Դիմումի ձևը սահմանված է հավելված 1-ում:

19. ԽՄ-ների անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության նպատակով հանձնաժողովի կողմից անց է կացվում հարցազրույց: Հանձնաժողովը նախագահում է համայնքի ղեկավարը: Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել համայնքի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը կարող է ունենալ երեք անդամ՝ ներառյալ նախագահը:

20. ԽՄ-ների անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության ժամանակ կարող են հաշվի առնվել հետևյալ չափանիշները.

- 1) թեկնածուի կրթական ցենզը.
- 2) համայնքի բնակչության տարբեր խմբեր ներկայացնող անձանց (կանայք, երիտասարդներ, խոցելի խմբեր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն) ներկայացուցչության ապահովումը.
- 3) հասարակական կարգով աշխատանքներ կատարելու նախկին փորձը.
- 4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ներկայացուցչության ապահովումը.
- 5) հարցազրույցի արդյունքները:

21. Դիմում ներկայացրած այն անձինք, ովքեր չեն ընդգրկվել ԽՄ-ներից որևիցե մեկի կազմում, գրանցվում են դիմում ներկայացրած անձանց ռեզերվում:

22. ԽՄ-ների անդամների գործունեությունը այն իրականացնելու ընթացքում հնարավոր է դադարեցվի:

23. ԽՄ-ի անդամի գործունեությունը դադարեցվում է, համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, համայնքի ավագանու որոշմամբ, եթե ԽՄ-ի անդամը.

- 1) դիմում է ներկայացրել տվյալ ԽՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ.
- 2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահամանփակ գործունակ.
- 3) առկա է նրա նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ և նա իր պատիժը կրում է քրեակատարողական հիմնարկում.
- 4) զորակոչվել է ժամկետային զինծառայության.
- 5) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել ԽՄ-ի նիստերի աշխատանքին.
- 6) մահացել է:

24. Եթե ԽՄ-ի անդամի գործունեության դադարեցման հետևանքով տվյալ ԽՄ-ի անդամների թիվը նվազել է հինգից, ապա ԽՄ-ի նոր անդամի թեկնածուն առաջադրվում է դիմում ներկայացրած անձանց ռեզերվից կամ, եթե դա հնարավոր չէ, ապա 15 օրվա

ընթացքում նոր տրված հայտարարության հիման վրա դիմում ներկայացրած անձանց կազմից:

25. Պտղնի համայնքի ղեկավարը ավագանու առաջիկա նիստին առաջարկություն է ներկայացնում ԽՄ-ի նոր անդամի թեկնածությունը հաստատելու վերաբերյալ:

26. Եթե տվյալ ԽՄ-ի անդամ հանդիսացող ավագանու ներկայացուցիչը կամ համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչը դադարեցնում է գործունեությունն իր պաշտոնում, նա կարող է շարունակել անդամակցել ԽՄ-ին:

27. ԽՄ-ի նախագահը Պտղնի համայնքի ղեկավարն է: Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ, ԽՄ-ների նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը:

28. ԽՄ-ի քարտուղարը համայնքի աշխատակազմի քարտուղարն է կամ նրա կողմից նշանակված համայնքի աշխատակազմի ներկայացուցիչը:

V. ԽՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

29. ԽՄ-ների անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձամբ, հասարակական հիմունքներով:

30. ԽՄ-ների գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը կազմակերպում է համայնքի աշխատակազմի քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում, աշխատակազմի բաժինների և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ներգրավմամբ և մասնակցությամբ:

31. Պտղնի համայնքի ղեկավարը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում (նիստերի սենյակ, աշխատասենյակ, համակարգիչ, գրասենյակային պարագաներ և այլն) ԽՄ-ների՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման և նիստերի կազմակերպման ու անցկացման համար, ինչպես նաև ԽՄ-ների գործունեությանը հաշմանդամների, սակավաշարժ խմբերի, կարդալու և լսելու դժվարություններ ունեցող անձանց մասնակցությունն ապահովելու համար:

32. ԽՄ-ների նիստերը գումարվում են՝

1) առնվազն երեք ամիսը մեկ անգամ.

2) անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

33. Նիստերը հրավիրում և վարում է ԽՄ-ների նախագահը:

34. ԽՄ-ի նիստի ամսաթիվը որոշում է ԽՄ-ի նախագահը:

35. ԽՄ-ի առաջին նիստը գումարվում է տվյալ ԽՄ-ի կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում:

36. ԽՄ-ների նիստերը կազմակերպվում և անց են կացվում ՏԻՄ-երի նստավայրում կամ համայնքի ղեկավարի որոշմամբ մեկ այլ վայրում:

37. ԽՄ-ի նիստի վայրը, ամսաթիվը և քննարկման ենթակա հարցերի օրակարգը հրապարակվում են նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Նշյալ տեղեկատվությունը փակցվում է ՏԻՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում,

որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

38. Պտղնի համայնքի պաշտոնական համացանցային կայքում, վերոնշյալ տեղեկատվությունը պարտադիր կերպով տեղադրվում է կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն):

39. ԽՄ-ի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են ԽՄ-ի անդամների թվի կեսից ավելին:

40. Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում տվյալ նիստի իրավագորությունը, կամ նիստին չի ներկայանում ԽՄ-ի նախագահը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ԽՄ-ի՝ նիստին ներկայացած անդամները:

41. ԽՄ-ի նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը:

42. ԽՄ-ների նիստերը դռնբաց են: ԽՄ-ի նիստին կարող են հրավիրվել տվյալ նիստի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերին առնչվող անձիք, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

43. ԽՄ-ի անդամը ԽՄ-ի նախագահի կողմից կարող է հեռացվել ԽՄ-ի նիստից՝ նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում:

44. ԽՄ-ի նիստի օրակարգը սահմանվում և իրականացվում է հետյալ կարգով.

- 1) ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը.
- 2) ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է տվյալ ԽՄ-ի քարտուղարին նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Հարցեր կարող են ներկայացնել նաև ԽՄ-ի բոլոր անդամները.
- 3) ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը, քննարկվող հարցերի վերաբերյալ կից փաստաթղթերը ԽՄ-ի քարտուղարը ներկայացնում է ԽՄ-ի անդամներին նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

45. ԽՄ-ի նիստի օրակարգի նախագծում նշվում են.

- 1) նիստի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամը.
- 2) քննարկման ենթակա հարցերը.
- 3) քննարկվող յուրաքանչյուր հարցի զեկուցողի անունը և ազգանունը:

46. ԽՄ-ի նիստն սկսվում է ԽՄ-ի նիստի օրակարգի հաստատումով՝ ԽՄ-ի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

47. ԽՄ-ները կազմում և ընդունում են որոշումներ:

48. ԽՄ-ների որոշումներն ընդունվում են ԽՄ-ների եզրակացությունների և (կամ) առաջարկությունների ձևով, որոնք ներկայացվում են համայնքի ղեկավարին:

49. ԽՄ-ի որոշումը համայնքի ղեկավարի համար կրում են խորհրդատվական բնույթ: ԽՄ-ների որոշումների հիման վրա համայնքի ղեկավարը կարող է ընդունել համապատասխան որոշումներ:

50. ԽՄ-ի որոշումն ընդունվում է տվյալ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ հավասար ձայների առկայության դեպքում վճռորոշ է տվյալ ԽՄ-ի՝ տարեց անդամի ձայնը:

51. ԽՄ-ի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

52. ԽՄ-ի նախագահը ունի խորհրդակցական ձայնի իրավունք:

53. ԽՄ-ի որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ԽՄ-ի անդամների անունները և ազգանունները:

54. ԽՄ-ի որոշումը ստորագրում են ԽՄ-ի նիստին ներկա անդամները:

55. ԽՄ-ների նիստերի ընթացքում կազմվում են արձանագրություններ:.

56. ԽՄ-ների նիստերն արձանագրվում են ԽՄ-ների քարտուղարի կողմից:

57. Նիստի արձանագրությունը ներառում է.

1) նիստի անցկացման վայրը և ամսաթիվը.

2) նիստին մասնակցած ԽՄ-ի անդամների, հրավիրված անձանց անունները և ազգանունները.

3) նիստի օրակարգը.

4) քննարկված հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.

5) ընդունված որոշումները, դրանց ներկայացման և հրապարակման ձևերը.

6) ընդունված որոշումներին դեմ քվեարկածների հատուկ կարծիքները(եթե այդպիսիք կան):

58. Նիստի արձանագրությանը կցվում են տվյալ ԽՄ-ի քննարկմանը դրված նյութերը, ուսումնասիրությունները, լուսանկարները, տեսանյութերը և այլն:

59. ԽՄ-ների նիստերի արձանագրությունները ստորագրում է ԽՄ-ների քարտուղարը: ԽՄ-ների նիստերի արձանագրությունները ենթակա են հրապարակման:

VI. ԽՄ-ՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

60. ԽՄ-ները մշտական կապ են հաստատում և համագործակցում են համայնքի տարածքում գործող այլ մարմինների՝ համայնքի ավագանու հանձնաժողովների, համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչների և շահագրգիռ այլ անձանց հետ:

61. ԽՄ-ները ուղղակի կապ են հաստատում համայնքային աշխատանքային խմբերի (այսուհետ՝ ՀԱԽ-եր) հետ, որոնք կարող են ձևավորվել ըստ համայնքի ղեկավարի՝ օրենքով սահմանված գործունեության բնագավառների (ոլորտների) կամ դրանց խմբերի, ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի կամ ըստ համայնքի առանձին թաղամասերի: ԽՄ-ների անդամները կարող են նախաձեռնել նման ՀԱԽ-երի ձևավորումը: ՀԱԽ-երի ձևավորումը համայնքի բնակիչների կողմից նախաձեռնվելու դեպքում նրանք կարող են այդ մասին տեղեկացնել այն ԽՄ-ին, որի գործունեության ոլորտին առնչվում են տվյալ ՀԱԽ-ի ձևավորման նպատակները: ՀԱԽ-ի անդամների կազմը համաձայնեցվում է համայնքի ղեկավարի և համապատասխան ԽՄ-ի հետ: ՀԱԽ-երն իրենց կողմից

կատարված աշխատանքների արդյունքները համայնքի ղեկավարին ներկայացնելուց բացի, ներկայացնում են նաև այն ԽՄ-ին, որին առնչվում են այդ արդյունքները: ԽՄ-ները մեթոդական օգնություն, խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն են տրամադրում ՀԱԽ-երին՝ նրանց աշխատանքները նպատակային և արդյունավետ իրականացնելու համար:

VII. ԽՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

62. Համայնքում գործող ԽՄ-ների գործունեությունը դադարեցվում է.

- 1) երբ լրացել է համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը.
- 2) երբ սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների արդյունքում փոխվել են ԽՄ-ների քանակները և (կամ) անվանումները:

VIII. ԽՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԴԵՐԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

63. ԽՄ-ների գործունեությանն առնչվող Պետդնի համայնքի ավագանու գործառույթներն են.

- 1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատում է սույն կարգը.
- 2) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, փոփոխությունների և (կամ) լրացումներ է կատարում սույն կարգի մեջ կամ դադարեցնում է սույն կարգի գործողությունը.
- 3) համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, հաստատում է ԽՄ-ների անդամներին.
- 4) համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, դադարեցնում է ԽՄ-ների անդամների գործունեությունը.
- 5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ծանոթանում է ԽՄ-ների ուսումնասիրությունների, եզրակացությունների և առաջարկությունների հետ.
- 6) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ԽՄ-ների եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա ընդունում է համապատասխան որոշումներ.
- 7) կարող է համայնքի ղեկավարից պահանջել տեղեկանքներ համայնքի տարածքում գործող ԽՄ-ների գործունեության վերաբերյալ:

64. ԽՄ-ներ գործունեությանն առնչվող՝ համայնքի ղեկավարի գործառույթներն են.

- 1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու վերաբերյալ.
- 2) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը.
- 3) ձևավորում է ԽՄ-ների անդամների ընտրության հանձնաժողով.
- 4) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն ԽՄ-ների կազմը հաստատելու վերաբերյալ.
- 5) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն ԽՄ-ների անդամների գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ.

- 6) կազմակերպում, ղեկավարում և նախագահում է ԽՄ-ների գործունեությունը.
 - 7) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ԽՄ-ների՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման, նիստերի կազմակերպման ու անցկացման համար.
 - 8) հրավիրում և վարում է ԽՄ-ների նիստերը.
 - 9) որոշում է ԽՄ-ների նիստերին հրավիրվող անձանց կազմը.
 - 10) ձևավորում է ԽՄ-ների նիստերի օրակարգերի նախագծերը.
 - 11) ծանոթանում է ԽՄ-ների ուսումնասիրություններին, եզրակացություններին և առաջարկություններին.
 - 12) ԽՄ-ների եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա նախաձեռնում է անհրաժեշտ գործողություններ, ընդունում է որոշումներ կամ առաջարկություններ է ներկայացնում համայնքի ավագանուն համապատասխան որոշումներ ընդունելու համար.
 - 13) նախաձեռնում է ՀԱԽ-երի ձևավորումը.
 - 14) համաձայնություն է տալիս համայնքի տարածքում ձևավորվող ՀԱԽ-երի կազմի վերաբերյալ:
